ԱՌԱՔԵԼ. ՊԱՏՄԱԳՐԻ ԳԱՄԲԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇԻՒԸ.

Արարատի միջոցաւ պարբերաբար իւր ժամանակին ներկայացրել ենք մանրամասն հաշիւ պատմագրի գամբարանի կառուցման համար ստացած գումարի մասին։ Ըստ վերջին հաշուի (Արարատ 1897 թ. մայիսի տետր) ունէինք 219 ռուբլի. որից յետոյ այդ նպատակով ոչ մէկից ոչինչ չունինք ստացած։ Սոյն գումարը մեզ մօտ առանց տոկոսի չպահելու համար 1897թուի մայիսի 17-ին յանձնեցինք Վաղարշապատի փոստ—հեռագրատան խնայողական արկղին № 63 տետրակով. ապա կամենալով հոգալ գամբարանի կառուցման մասին, յետ ստացանք խնայողական արկղից այդ գումարն 1898 թուի Հոկտեմբերի 15 ին, որ մինչև այդ ժամանակ տոկոսիքով դարձել էր 229 ռուբլի 61 կոպ։ Բայց տեսնելով որ մի համեստ գամբարանի կառուցման համար քիչ է այդ գումարը, կրկին յանձնեցինք Երևանի պետական արկղին № 2300 տետրակով ի պահպանութիւն և ի շահեցողութիւն։

Բաբգէն վարդ. Աղաելեանց

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Դատական նախարարութենէն Ս Պատրիարք Հօր հաղորդուեցաւ Կայսերական Իրատէ մը, որով Զատկի տօնին առթիւ 500 ռսկի կշնորհուի Ազգ. Պատրիարքարանին։ Ս. Պատրիարք Հայրն շնորհակալութեան ուղերձ մը մատոյց։

— Պատրիարքական Շրջաբերականով մը պատուիրուեցաւ եկեղեցիներու քարոզիչներուն և Թաղ. Խորհուրդներուն՝ պնակ մը հաստատել եկեղեցիներուն մէջ, հասոյթը Ս. Պատրիարքին տրամադրութեան ներքև դրուելու համար, որ զայն պիտի գործածէ գաւառային եկեղեցիներուն նորոգութիւններուն համար պէտք եղած անհրաժեշտ ծախքերուն։ Պնակներուն հասոյթը պէտք է ամէն ամիս յանձնուի Պատրիարքարանին։ Նաև նոյն նպատակաւ շնորհակալութեամբ ընդունուած մանաւոր նուէրները։

— Պատրիարքարանի Որբոց և կարօտելոց խնամակալութեան սնուցեալներն տարեկան 150 ռսկի յատկացուած է Կիւրինի նորահաստատ Որբանոցին, և տեղային միջոցներով ու հանգանակութեամբ ալ պիտի հայթայթուի մնացեալ 50 ռսկին։

— 14 մայիս Խան Ժողովը գումարեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ։ Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի։

Ժողովը նկատելով որ Մշոյ առաջնորդութեան և վանօրէից։ ինչպէս նաև Կինճի վիճակին բովանդակ գործոց հոգը ծանրացած է Տ. Վարդան վրդ.-ի վրայ և կարելի չէ անոր՝ հասնիլ վարելու այս ընդհանուր գործերը։ Սամսոնի Առաջն. Տեղապահ Բարգէն Ծ. վրդ.-ն Առաջն. Տեղապահ կարգեց Մշոյ. իսկ Կինճի առաջն. փոխանորդութիւնը վերապահեց Վարդան վրդ.-ի։ այն կարգադրութեամբ սակայն որ Վարդան վրդ. իր փորձառութեամբ ունենայ դարձեալ իր աջակցութեան բաժինը Մշոյ առաջնորդական ու վանական գործոց մէջ։

— Սամսոնի վիճակին առաջն. տեղապահ կարգեցաւ Խասգեղի քարոզիչ Տ. Գնել Ծ. վրդ. Գալէմքեարեան։

— Երզնկայի Առաջնորդի ընտրութիւն կատարուած և առաջն. Տեղապահ Տ. Դանիէլ վրդ. Առաջնորդ ընտրուած լինելով։ ժողովն ստուգեց ընտրութեան օրինաւորութիւնն ու հաստատեց։

— Պատրիարքարան հասած հեռագիր մը կծանուցանէ թէ Մշոյ առաջնորդական փոխանորդ Տ. Վարդան վրդ. արկածի մը ենթակայ եղեր է անցեալ շաբթուն։ և վիրաւորուեր է։

— Վանէն Պատրիարքարան հասած հեռագիր մը կծանուցանէ թէ Կաթոլիկ որբանոցին մէջ պատրաստուող Հայ որբերէն 7-ն ևս Ազգ. Որբանոցին մէջ տեղաւորուեր են։

— Նոյնպէս ուրիշ հեռագրէ մը կը տեղեկացուի թէ Գուրու Պաշի ազգայինք (Վան) ամրողջովին վերադարձեր են ի ծոց Մայրենի Եկեղեցւոյ։ և յոյս կայայտնուի թէ կրօնափոխութեան հոսանքին առաջքն առնուած է։

— Ատանայի մէջ առաջն. Տեղապահի պաշտօնն ստանձներ է Սահակ վրդ. Զօլագեան։

— Վանայ մէջ դաւանափոխ եղած ազգայիններուն ամենամեծ մասն արդէն դարձած ըլլալով ի ծոց Մայրենի Եկեղեցւոյ։ առ այժմ յետաձգուեր է հայ կաթոլիկներու յատուկ եկեղեցիի մը շինութիւնն։ և պաշտամունք պիտի շարունակուին արդի առժամանակեայ շէնքին մէջ։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը 15 մայիս իրիկուն Գուրուչէշմէ գնաց։ Ցաջորդ օրը կիւրակէ առաւօտ Ն. Սրբազնութիւնը հանդիսաւոր Պատարագ մատոյց և քարոզ խօսեցաւ։ բնարան առնելով Սողոմոն իմաստունին խօսքերը «Զերախտիս երախտաւորաց չմոռանալ»։